ՀՀ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանին

Հայցվոր՝ – Արթուր Սաքունց
ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր
Անձնագիր AE0543997, տրված՝ 17.12.1999թ., 018-ից

Հայցվորի ներկայացուցիչ՝ Կարեն Հովհաննեսի Թումանյան
ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր Զ.Անդրանիկի 56/8
Արտոնագիր թիվ 649, տրված 09.11.2006թ

Պատասխանող՝ – Ռուբեն Հայրապետյան
ՀՀ, ք.Երևան, Խանջյան 27

Երրորդ անձ՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերություն
ՀՀ, ք.Երևան, Նորք, Գևորգ Հովսեփյան փողոց 26 շենք

Հ ա յ ց ա դ ի մ ո ւ մ

(Հրապարակային ներողություն խնդրելուն պարտավորեցնելու, պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին)

Արթուր Սաքունցը հանդիսանում է «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավարը:

2012 թվականի մայիսի 26-ին Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ ցուցադրվել է «Լրացուցիչ ժամանակ» սպորտային հաղորդումը, որտեղ հաղորդման հյուրը՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ՝ Ռուբեն Հայրապետյանը կատարել է հետևյալ արտահայտությունները. «Երբ որ ես Վանաձորում ուզում եմ ֆուտբոլի դպրոցը կառուցեմ, ոչ մի ծառ, ոչ մի թուփ չկա, սարի վրա դպրոց եմ կառուցում, բայց չգիտես ինչի հայտնվեց Հելսինկյան մի հատ ինչ որ անհասկանալի օղերով մի հատ շան ծնունդ ու բռնեց դատի տվեց մեզ, քաղաքապետարանին, ավագանու որոշմանը, այդ թվում ֆեդերացիան էլ որպես երրորդ կողմ, պատասխանող կողմ: Հիմա դրանք մի քանի կոպեկ արտասահմաններից էդ գռանտները ստանում են, իրանց գռանտների հաշվին ցանկացած գեղեցիկ բան այսօր վարկաբեկում են»:

Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ ցուցադրված՝ «Լրացուցիչ ժամանակ» սպորտային հաղորդմանը տված հարցազրույցում Ռուբեն Հայրապետյանի կողմից նշված վիրավորական արտահայտություններով Արթուր Սաքունցի պատիվն ու արժանապատվությունն արատավորվել է:

Գտնում եմ, որ Ռուբեն Հայրապետյանին պետք է պարտավորեցնել հրապարակայնորեն ներողություն խնդրել Արթուր Սաքունցից, ինչպես նաև որպես փոխհատուցում Ռուբեն Հայրապետյանից հօգուտ Արթուր Սաքունցի պետք է բռնագանձել 10 (տաս) ՀՀ դրամ գումար՝ հետևյալ պատճառաբանությամբ և հիմնավորմամբ.

2012 թվականի մայիսի 26-ին Հայաստանի հանրային հեռուստաընկերությամբ ցուցադրված «Լրացուցիչ ժամանակ» սպորտային հաղորդման հյուրը՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ՝ Ռուբեն Հայրապետյանը Արթուր Սաքունցի մասին ասել է. «Հելսինկյան մի հատ ինչ որ անհասկանալի օղերով մի հատ շան ծնունդ»:

Ռուբեն Հայրապետյանի կողմից կատարված վիրավորական արտահայտություններով Արթուր Սաքունցի պատիվն ու արժանապատվությունը արատավորվել է:

ՀՀ քաղաքացիական օրենգրքի 1087.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

ՀՀ քաղաքացիական օրենգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով

պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը և 87-րդ հոդվածի 1-ին կետը՝

Խ ն դ ր ո ւ մ ե մ

Ռուբեն Հայրապետյանին պարտավորեցնել հրապարակային ներողություն խնդրել Արթուր Սաքունցից հետևյալ բովանդակությամբ.

«Ես՝ Ռուբեն Հայրապետյանս, 2012թ մայիսի 25-ին հանրային հեռուստատեսության «Լրացուցիչ ժամանակ» հաղորդաշարի եթերում թույլ եմ տվել ոչ պատշաճ, վիրավորական արտահայտություններ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի հասցեին, որի համար ներողություն են խնդրում»:

Ռուբեն Հայրապետյանից հօգուտ Արթուր Սաքունցի՝ որպես պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցում, բռնագանձել 10 (տաս) ՀՀ դրամ գումար:

Կից ներկայացվում են՝

1.Հայցադիմումի պատճենը,
2.Անձնագրի լուսապատճենը,
3.Լազերային սկավառակը (31:10 31:45 րոպեներ),
4. Լիազորագիր,
5. Արտոնագրի և վկայականի լուսապատճենները,
6.Պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Հայցվորի ներկայացուցիչ՝ _____ Կարեն Թումանյան

15 հունիսի 2012թ.